ՕԼԱՆԶԱՊԻՆ (OLANZAPINE)

ԻՆՉՈ՞Ւ ԵՄ ԵՍ ՍՏԱՆՈՒՄ ՕԼԱՆԶԱՊԻՆԻ ԴԵՂԱՏՈՄՍ

Բուժումը, որը Դուք կստանաք քաղցկեղի համար, կարող է առաջացնել սրտխառնոց կամ փսխում: Մենք ամեն ինչ անում ենք այս կողմնակի ազդեցությունը նվազեցնելու համար: Օլանզապինը շատ արդյունավետ է, նույնիսկ փոքր չափաբաժիններով, սրտխառնոցն ու փսխումը նվազեցնելու համար և այն Ձեր բուժման կարևոր բաղադրիչն է:

Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԱԿՆԿԱԼԵՄ ԴԵՂԱՏՈՒՆ ԳՆԱԼԻՍ

Օլանզապինն ի սկզբանե հաստատվել է որոշակի հոգեկան հիվանդություններ ունեցող մարդկանց բուժման համար: Դեղատոմսը տալիս կամ դեղը վերցնելիս դեղագործը կարող է Ձեզ տեղեկացնել դեղամիջոցի օգտագործման սկզբնական պատճառի մասին: Մենք ցանկանում ենք, որ Դուք պատրաստ լինեք նման իրավիճակի: Գուցե կցանկանաք դեղագործին հարցնել, թե ինչու են Ձեզ նշանակել օլանզապին, և որ Ձեր քաղցկեղի թիմը օլանզապին է նշանակում բոլորովին այլ պատճառով: Դեղորայքի այս նախնական հաստատումը ազդակ չէ Ձեր ապահովագրության կամ Ձեր բժշկական գրառումների մեջ՝ ենթադրելու համար, որ դեղատոմսի առկայությունը որոշակի հոգեկան հիվանդության նշան է:

Ի՞ՆՉ ԿՈՂՄՆԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՆ

Այս դեղամիջոցի համար թվարկված գրեթե բոլոր կողմնակի ազդեցություններն առաջանում են այն մարդկանց շրջանում, ովքեր ավելի մեծ չափաբաժիններ են ընդունում, և ովքեր ընդունում են այն ամեն օր տարիներ շարունակ: Քիմիոթերապիայի համար օլանզապին ընդունող մարդկանց մոտ կողմնակի ազդեցությունների առաջացման հավանականությունը ցածր է. բացառություն է հոգնածությունը: Այդ պատճառով հաճախ խորհուրդ է տրվում այն ընդունել երեկոյան:.

ԱՐԴՅՈ՞Ք ՕԼԱՆԶԱՊԻՆԸ ԾԱԾԿՎՈՒՄ Է ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՄԲ: ԱՅՆ ԹԱ՞ՆԿ Է

Այս դեղը շատ ավելի էժան է, քան քիմիոթերապիայի կողմնակի ազդեցությունները կանխելու համար օգտագործվող այլ դեղամիջոցները: Յուրաքանչյուր դեղահատի արժեքը կազմում է մոտ 20 ցենտ: Մեծ մասամբ, ապահովագրությունը ծածկելու է այդ ծախսերը, իսկ եթե դրանք չծածկվեն ապահովագրությամբ, ապա Դուք կարող եք նաև ինքներդ վճարել:

ԱՅՍ ԿԱՅՔԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՕԳՏԱԿԱՐ ԼԻՆԵԼ ՔԱՂՑԿԵՂԻ ԲՈՒԺՈՒՄՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՍՐՏԽԱՌՆՈՑԻ ԵՎ ՓՍԽՄԱՆ ՄԱՍԻՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ.

National Cancer Institute - www.cancer.gov
American Cancer Society - www.cancer.org
American Society of Clinical Oncology (ASCO) - www.cancer.net
National Comprehensive Cancer Network (NCCN) - www.nccn.org

MOQC
MICHIGAN ONCOLOGY QUALITY CONSORTIUM

Blue Cross Blue Shield of Michigan
Nonprofit corporations and independent licensees of the Blue Cross and Blue Shield Association